

## ՏԵՂԵԿԱԼՔ

### **2022 թվականի երկրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարանի մուտք գործած և մարզպետարանից առաքված փաստաթղթերի վերաբերյալ**

2022 թվականի երկրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3494 թղթակցություն, առաքվել՝ 2445 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Ազգային ժողովից՝ 4, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 92, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 322, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 397, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 722, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1380, գաղտնի թղթակցություն՝ 36, քաղաքացիներից՝ 541 դիմում:

ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 41 դիմում, որից՝ ՀՀ Ազգային ժողովից՝ 3, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 26, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 4, հանրապետական գործադիր մարմիններից՝ 8:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը.

Ամսական մեկ անգամ մարզկենտրոնում կատարվել է քաղաքացիների ընդունելություն; Բացի այդ քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ;

2022 թվականի երկրորդ եռամսյակում կատարվել է 8 քաղաքացիների ընդունելություն;

Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում;

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում են ամենօրյա, աշխատանքային կարգով;

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Քաղաքացիների ընդունելության մասին տեղեկատվությունը ամենամսյա պարբերականությամբ ներկայացվում է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: